# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Գառու Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 12 | Մաքսային մարմնի արական և իգական սեռերի հանրային ծառայողների կիսաճտքավոր կոշիկ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի, փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի արական և իգական սեռերի հանրային ծառայողների ձմեռային կիսաճտքավոր կոշիկը (Նկար 53) սև գույնի (գունային կոդը՝ 19-4203TPG) բնական կաշվից է: Կոշիկը բաղկացած է քթամասից, մինչև ճտքերի վերևը բարձրացող հետնամասից և ամբողջական կողամասից: Երեսամասը՝ ամբողջական առաջամասով: Հետնամասում՝ լրացուցիչ կաշվով մշակված գոտի, որը շարունակվում է մինչև ճտքերի վերջը: Լեզվակը միացված է առաջամասին և ճտքերի ստորին մասին: Ներբանը ձևավորված է պոլիուրեթանից՝ սոսնձով միացման մեթոդով: Կոճկվում է շղթայով և քուղերով: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: Կոշիկների յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: Յուրաքանչյուր ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է լինի առանձին պոլիէթիլենային փաթեթավորմամբ: Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր |

| | |
|---|---|
| | նյութերի նմուշները՝ ամրացված A4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: ********** Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: *********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1980-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարներով նշված նկարները: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Գառու Գրուպ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 12 | |